# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՍ Մոնիթորինգ ՍՊԸ-ն ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/51 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Teltonika | Teltonika | FMC150 | Teltonika | Երևան քաղաքի աղբահանման և սանիտարական մաքրման համակարգում ընդգրկված տրանսպորտային միջոցների մշտադիտարկումն ներկայումս իրականացվում է Wialon Local ծրագրային ապահովման միջոցով: Վերոհիշյալ ծրագրային ապահովումն իրենից ներկայացնում է «հաճախորդ-սերվեր» համակարգ, որտեղ «հաճախորդ» են հանդիսանում տրանսպորտային միջոցների վրա տեղադրված տեղերոշման սարքվորումները: Շարժակազմի ընդլյանման, ինչպես |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նաև մշտադիտարկման համակարգի մեջ այլ միավորներ ընդգրկելու հետևանքով անհրաժեշտություն է առաջանում` «հաճախորդ» կարգավիճակով սպասարկման միավորների թիվն 200 (հարյուր) միավորով ավելացնելու` համապատասխան 200 արտոնագիր ձեռքբերելով, ինչպես նաև շահագործման մեջ մտցվող թվով 15 (տասնհինգ) միավոր նոր տրանսպորտային միջոցները համապատասխան լրակազմ տեխնիկական սարքավորումներով և 15 (տասնհինգ) միավոր շահագործվող տրանսպորտային միջոցները վառելիքի մակարդակի տվիչներով օժտելու` տրամադրելով նաև վառելիքի մակարդակի տվիչների 5 (հինգ) լրակազմ որպես պահեստամասեր։ Վերոշյալ 200 արտոնագրերը պետք է տրամադրված լինեն Wialon Local ծրագրային ապահովման հեղինակ` Gurtam ընկերության, կամ Հայաստանի Հանրապետությունում (կամ տարածաշրջանում, որն ընդգրկում է նաև Հայաստանի Հանրապետությունը) այդ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ընկերության պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող կամ Wialon Local ծրագրային ապահովման լիազոր տարածող հանդիսացող կազմակերպության կողմից։ Արտոնագրերի գործունեության ժամկետը պետք է լինի «անժամկետ»։ Արտոնագրերի ձեռքբերումից ծագող իրավունքները (այդ թվում, ապա չսահմանափակվելով դրանով, տեխնիկական սպասարկում և համապատասխան աջակցություն ստանալու իրավունքը) պետք է ուժի մեջ լինեն անժամկետ։ Արտոնագրերի ձեռքբերումը պետք է հանդիսանա Wialon Local ծրագրային ապահովումից օգտվելու համապատասխան հնարավորությունները տրամադրելու համար միակ և բավարար պայմանը։ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ Սպասարկման արդյունքում պետք է հնարավորություն ընձեռվի. 1. Իրականացնել տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի առցանց մոնիտորինգ (CAN դողի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համապատասխան գործառնության առկայության պարագայում), վերջինիս աշխարհագրական դիրքի տեղորոշմամբ։ 2. Հասանելիություն ստանալ ՏՄ-ի արխիվացված առնվազն հետևյալ (ներառյալ, սակայն չսահմանափակելով) տվյալներին. • շարժիչի պտույտները (պտ/ր); • հովացնող հեղուկի ջերմաստիճանը (˚C); • շարժիչի աշխատանքի ընդհանուր ժամանակը (ժ); • արագություն (կմ/ժ) ըստ տրանսպորտային միջոցի սպիդոմետրի; • օդոմետրի ցուցմունքը (կմ); • գումարային ծախսած վառելանյութը (լ); • գազ/աքսելերատոր (%); • արգելակի դիրքը (%); • շարժիչի ծանրաբեռնվածությունը (%); • արտաքին ջերմաստիճանը (˚C); • շարժիչի յուղի ճնշումը (kPa); • շարժիչի յուղի ջերմաստիճանը (˚C); • արգելակման շրջան 1-ում օդի ճնշումը (kPa); • արգելակման շրջան 2-ում օդի ճնշումը (kPa); • տրանսպորտային միջոցի դռների տվյալ (բաց/փակ); • ձախ թարթիչը (միացած/անջատած); • աջ թարթիչը (միացած/անջատած); • վթարային |

ազդանշան (միացած/անջատած); • Լուսավորում 1 (կայանման լույսերը միացած/անջատած); • Լուսավորում 2 (ցածր ճառագայթը միացած/անջատած); • Լուսավորում 3 (ցածր ճառագայթը միացած/անջատատված; • և այլ տեղեկատվություն, որն առկա է ՏՄ-ների CAN-դողերում: 3. Դիտարկել վառելիքի և քսանյութերի օգտագործումը, մասնավորապես. • սպասարկումը պետք է ապահովի տրանսպորտային միջոցների վառելիքի սպառման հաշվարկը, ինչպես նաև ամբողջ վառելիքի լիցքավորման/թափման մասին տեղեկատվության առցանց հասանելիությունը: • սպասարկումը պետք է ապահովի յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի շարժիչի պարապ աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության (սկիզբը, ավարտը, տևողությունը, և դեպքերի ընդհանուր քանակի հաշվարկը) հասանելիությունը: 4. Առցանց եղանակով տեղեկանալ հատուկ տեխնիկայի աշխատանքային ռեժիմների, դրանց տևողության և ինտենսիվության մասին. •

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГС МОНИТОРИНГ общество с ограниченной ответственностью (ООО) в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/51 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հավելված սարքավորումների առկա աշխատանքային ռեժիմը; • հավելված սարքավորումների յուրաքանչյուր ռեժիմի սկիզբը և ավարտը;  ռեժիմի սկզբնական պահը;  սկզբնական պահին տեղորոշումը;  ռեժիմի վերջնական պահը;  վերջնական պահին տեղորոշումը: 5. Յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի վերաբերյալ սահմանված ժամանակահատվածի համար գեներացնել ամփոփ տեղեկագրեր՝ տրանսպորտային միջոցի ընդհանուր մոտոժամերի, շարժման մեջ գտնվելու ժամանակի, վազքի սկզբնական և վերջնական ցուցանիշների, դրանց տարբերության, վառելանյութի զանգվածային ծախսի, վառելանյութի զանգվածային տեսակարար ծախսի՝ ըստ անցած ճանապարհի և ժամանակի, վերաբերյալ: 6. Իրականացնել տրանսպորտային միջոցի շահագործման կանոնների պահպանման վերահսկում, մասնավորապես. • տեղեկատվություն տրամադրի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տրանսպորտային միջոցի շահագործման ռեժիմների մասին և դրանցի թույլատրելի արագության գերազանցման, հանկարծակի մանևրելու, արագացման և արգելակման և նմանատիպ այլ փաստերը՝ արձանագրելով.  արագության գերազանցման ռեժիմի սկիզբը, ավարտը, տևողությունը, այդ ընթացքում տրանսպորտային միջոցի տեղադիրքը, ռեժիմի խախտումով կատարած վազքը, առավելագույն արագությունը և ռեժիմի խախտման ընդհանուր դեպքերի քանակը;  վարորդի ամրագոտու կարգավիճակը (կոճկած/արձակած), այդ կարգավիճակի սկիզբը, ավարտը, տևողությունը, այդ ընթացքում տեղորոշումը և այդ կարգավիճակով վազքը (CAN դողի համապատասխան գործառնության առկայության պարագայում);  տրանսպորտային միջոցի տեղորոշումը խլաճնշելու առկայությունը, այդ խլաճնշման սկիզբը, ավարտը, տևողությունը, այդ ընթացքում տեղորոշումը և այդ կարգավիճակով վազքը;  |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տրանսպորտային միջոցի սահմանված երթուղուց դուրս գտնվելու կարգավիճակը, այդ կարգավիճակի սկիզբը, ավարտը, տևողությունը, սկզբնական և վերջնական տեղորոշումը, այդ կարգավիճակում շարժիչի աշխատած մոտոժամերը և կատարված վազքը։ 7. Հեռահաղորդակցային տվյալների վերափոխում և ներկայացում աղյուսակների, գծապատկերների, ամփոփ հաշվետվությունների, դիագրամների տեսքով՝ օգտատերերի հետագա ծանոթացման և դրանց հիման վրա հաշվետվության ձևավորման համար: ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 8. Սպասարկման ծրագրային ապահովումը ներկա դրությամբ ապահովում է ԵԱՍՄ հիմնարկի կարիքները միայն մասնակի և դրանով է իսկ պայմանավորված ընդլայնման անհրաժեշտությունը։ 9. Ներկայումս կիրառվող սպասարկման ծրագրային ապահովումը ներկայացնում է իրենից Wialon Local |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մշտադիտարկման հենքային համակարգ: 10. Սպասարկման ընդլայնման ծրագրային բաղադրիչը պետք է իրենից ներկայացնի Wialon Local մշտադիտարկման համակարգի լրացուցիչ 200 (հարյուր) արտոնագիր՝ արդեն իսկ գործող Wialon Local մշտադիտարկման համակարգի կողմից սպասարկվող տրանսպորտային միջոցների քանակությունն ավելացնելու գործառույթով: ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 11. Սպասարկման ընդլայնման տեխնիկական բաղադրիչը պետք է ապահովի. • հեռավար եղանակով համալիր մշտադիտարկումով ընդգրկված տրանսպորտային միջոցների քանակության ավելացում՝ 15 (տասնհինգ) միավորով; • հեռավար եղանակով տրանսպորտային միջոցի վառելանյութի շարժի մշտադիտարկումով ընդգրկված տրանսպորտային միջոցների քանակության ավելացում՝ 15 (տասնհինգ) միավորով; • արդեն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | իսկ սպասարկվող և սպասարկման ընդլայնման գործընթացի շրջանակներում սպասարկման ենթակա տրանսպորտային միջոցների վառելանյութի շարժի մշտադիտարկումն իրականացնելու անխափան գործընթացի ապահովման համար տրամադրել (որպես պահեստամաս) լրացուցիչ 5 (հինգ) լրակազմ վառելիքի մակարդակի տվիչներ: 12. Սպասարկման տեխնիկական բաղադրիչը պետք է ապահովի մշտադիտարկման համակարգի շարժական (տրանսպորտային միջոցի վրա տեղադրվող) բոլոր սարքավորումների համակցված աշխատանքը՝ առանց վնասման վտանգի տակ գտնվող (հաշվի առնելով սպասարկվող տրանսպորտային միջոցների շահագործման բնույթից բխող առանձնահատկությունները) լարանցումների առկայության: ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 2 տարվա ընթացքում շահող ընկերությունը պարտավոր է իր հաշվին ապահովել թվով 30 մեքենաների համար նախատեսված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սարքավորումները և ծրագրային ապահովումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկական միջոցները շարքից դուրս են եկել կատարող կազմակերպության մեղքից դուրս (վթարի, շահագործման կանոնները խախտելու, դիտավորությամբ վնասելու կամ այլ նմանատիպ պատճառով): Ծրագրային ապահովումը պետք է օժտված լինի համակարգի անվտանգությանն ուղղված միջոցներով: |